



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Շահումյանի թ/ֆ համայնք
Հեռ.՝ 044 84 08 08, Էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am
Համայնքային կայք՝ shahumyanitf.am

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> դեկտեմբերի 2019 թվականի N 59

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով և 14-րդ հոդվածի չորրորդ և վեցերորդ մասերով՝ *համայնքի ավագանին*

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի ավագանու՝ 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N11 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ «Կողմ»՝ 3 «Դեմ»՝ 0 «Ձեռնպահ»՝ 0

1. Դանիելյան Անդրանիկ
2. Մկրտչյան Սանդրո
3. Յայլոյան Աշոտ

(Handwritten signatures in blue ink)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ
համայնքի ավագանու՝ 2019 թվականի
դեկտեմբերի 13-ի N 59 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 11 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍԻ

1. Ավագանու՝ 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N11 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

Ձեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Լ.Յայլոյան

2. Շահումյանի թ/ֆ համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

Ձեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Լ.Յայլոյան

3. Դրամական օգնություն տրամադրելու մասին:

Ձեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Լ.Յայլոյան

4. Ամանորի տոնի առթիվ համայնքի բյուջեից գումար հատկացնելու մասին:

Ձեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Լ.Յայլոյան

5. Շահումյանի թ/ֆ համայնքի ավագանու՝ 2019 թվականի սեպտեմբերի 26-ի N 44 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Ձեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Լ.Յայլոյան

6. Միանվագ դրամական պարգևատրում տալու մասին:

Ձեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Լ.Յայլոյան

7. Համայնքի բյուջեի ֆոնդային մասով նախատեսված ծախսերի մասին:

Ձեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Լ.Յայլոյան

8. Սեփականության իրավունքով գույքը <<Գազպրոմ Արմենիա>> փակ բաժնետիրական ընկերությանը անհատույց հանձնելու մասին:

Ձեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Լ.Յայլոյան



ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **7500 /յոթ հազար հինգ հարյուր/** ՀՀ դրամ,

բ. սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **15000/տասնհինգ հազար/** ՀՀ դրամ,

- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **25000/քսանհինգ հազար/** ՀՀ դրամ,

- 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **25000/քսանհինգ հազար/** ՀՀ դրամ,

- 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **50000/հիսուն հազար/** ՀՀ դրամ,

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **1500/մեկ հազար հինգ հարյուր/** ՀՀ դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **2500/երկու հազար հինգ հարյուր/** ՀՀ դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության

համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն **/1500 /մեկ հազար հինգ հարյուր/** ՀՀ դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն դրույքաչափերի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն դրույքաչափերի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝ **2500/երկու հազար հինգ հարյուր/** ՀՀ դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **60000/վաթսուն հազար/** ՀՀ դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **18000/տասնութ հազար/** ՀՀ դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի, որոշակի վայրում մանրածախ առքուվաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **15000/տասնհինգ հազար/** ՀՀ դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքի և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **3000 /երեք հազար/** ՀՀ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **3900 /երեք հազար ինը հարյուր/** ՀՀ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **6000 /վեց հազար/** ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **7500 /յոթ հազար հինգ հարյուր/** ՀՀ դրամ ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **13500 /տասներեք հազար հինգ հարյուր/** ՀՀ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **30300 /երեսուն հազար երեք հարյուր/** ՀՀ դրամ.

բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **3000 /երեք հազար/** ՀՀ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **3900 /երեք հազար ինը հարյուր/** ՀՀ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **6000 /վեց հազար/** ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **7500 /յոթ հազար հինգ հարյուր/** ՀՀ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **13500 /տասներեք հազար հինգ հարյուր/** ՀՀ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **30300 /երեսուն հազար երեք հարյուր/** ՀՀ դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար մեկ քառակուսի մետրի համար՝ **105 /մեկ հարյուր հինգ /** ՀՀ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ **25000/քսանհինգ հազար / ՀՀ դրամ,**

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ,**

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ,**

դ. խաղատների համար՝ **500000/հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ,**

ե. շահումով խաղերի համար՝ **250000/երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ,**

զ. վիճակախաղերի համար՝ **100000/մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ.**

10) համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **1000/մեկ հազար / ՀՀ դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **2000 /երկու հազար/ ՀՀ դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **3000/երեք հազար/ ՀՀ դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **4500/չորս հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **6000/վեց հազար/ ՀՀ դրամ,**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **11000/տասնմեկ հազար/ ՀՀ դրամ.**

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **300/երեք հարյուր/ ՀՀ դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **500/հինգ հարյուր/ ՀՀ դրամ,**

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **800/ութ հարյուր/ ՀՀ դրամ,**

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **1500/մեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,**

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **2800 /երկու հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ,**

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **4900/չորս հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ.**

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական և հանրապետական նշանակության

ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ակոնոիլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **1000/մեկ հազար / ՀՀ դրամ,**

բ. թունդ ակոնոիլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **2500/երկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,**

գ. սոցիալական գովազդի համար՝ **0/զրո/ ՀՀ դրամ,**

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **500/հինգ հարյուր/ ՀՀ դրամ,**

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 % -ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանուն և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **30000/երեսուն հազար/ ՀՀ դրամ.**

13) համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **5000/հինգ հազար/ ՀՀ դրամ.**

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **150000/մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ.**

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **1115000 /մեկ միլիոն մեկ հարյուր տասնհինգ հազար/ ՀՀ դրամ,**

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **2205000/երկու միլիոն երկու հարյուր հինգ հազար/ ՀՀ դրամ,**

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **3200000 /երեք միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ,**

դ. 10 հա-ից ավելի մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **5000000/հինգ միլիոն / ՀՀ դրամ.**

16) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար **70000 / յոթանասուն հազար / ՀՀ դրամ.**

17) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում **15000/տասնհինգ հազար/** ՀՀ դրամ.

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում **100000 / մեկ հարյուր հազար/** ՀՀ դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐ

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) համայնքի վարչական տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել **3000 /երեք հազար/** ՀՀ դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրական ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել **5000 /հինգ հազար/** ՀՀ դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել **5000/հինգ հազար/** ՀՀ դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել **5000/հինգ հազար/** ՀՀ դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել **5000 /հինգ հազար/** ՀՀ դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել **4000 /չորս հազար/** ՀՀ դրամ.

7) համայնքի կողմից աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է՝

ա. կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով, ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական **50/հիսուն/** ՀՀ դրամ,

բ. հիմնական և ոչ հիմնական շինություններում գտնվող խանութներից, առևտրի, հանրային սննդի և այլ հասարակական ու արտադրական նշանակություն ունեցող օբյեկտներից ամսական վճար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **300 /երեք հարյուր/** ՀՀ դրամ,

- 21-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **500/հինգ հարյուր/** ՀՀ դրամ,

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **1000/մեկ հազար/** ՀՀ դրամ,

- 101 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **2000/երկու հազար/** ՀՀ դրամ,

գ. սույն կետի 7-րդ ենթակետի ա/ և բ/ պարբերություններով սահմանված վճարներից ազատվում են՝

- Հայրենական մեծ պատերազմի վետերանները, նրանց ընտանիքի անդամները,

- զոհված ազատամարտիկների ընտանիքների անդամները,

- հաշմանդամ դարձած ազատամարտիկները և նրանց ընտանիքները,

- «Փարոս» համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով ընտանիքների անդամները.

դ. իրավաբանական անձանց աղբահանության վճարների դրույքաչափերը՝

- առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման ծառայություններ իրականացնող շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետրի համար՝ **50/հիսուն/** ՀՀ դրամ,

- արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետրի համար՝ **5/հինգ/** ՀՀ դրամ,

- կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետրի համար՝ **3 /երեք/** ՀՀ դրամ.

7) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար սահմանել **1000/մեկ հազար/** ՀՀ դրամ.

8) համայնքը սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ փոխհատուցման գումարի չափով՝

Հ/հ	Անասնաբուժական ծառայության անվանումը	Գինը / դրամ/
1	Կենդանիների հիվանդությունների բուժման , կանխարգելման հարցերով խորհրդատվություն	0
2	Ծննդօգնություն 1. թեթև միջամտություն 2. ծանր միջամտություն	1000 2000
3	Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունատու կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից / բացառությամբ <<Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումներ/	0
4	Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար	500
5	Ախտահանություն	1 ք/մ 100
6	Միջատազերծում / դեզինսեկցիա /	1 ք/մ 100
7	Կենդանու բուժում՝ կախված հիվանդության և կենդանու տեսակից	Յուրաքանչյուր այցելություն՝ 1000
8	Արհեստական սերմնավորում	10000
9	Կենդանիների նախասպանդային զննում, կախված կենդանու տեսակից	Մանր կենդանի 1000 Խոշոր կենդանի 2000

Աշխատակազմի քարտուղար՝



Մանուկյան

Հ. Մանուկյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Շահումյանի թ/ֆ համայնք
 Հեռ.՝ 044 84 08 08, Էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am
 Համայնքային կայք՝ shahumyanitf.am

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> դեկտեմբերի 2019 թվականի N 61


ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով սոցիալական հանձնաժողովի՝ 2019 թվականի դեկտեմբերի 9-ի եզրակացությունը՝ *համայնքի ավագանին*

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Շահումյանի թ/ֆ համայնքի անապահով ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման նպատակով հատկացնել 30,0 /երեսուն / հազար դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ «Կողմ»՝ 3 «Դեմ»՝ 0 «Ձեռնպահ»՝ 0

1. Դանիելյան Անդրանիկ 

2. Մկրտչյան Սանդրո 

3. Յայլոյան Աշոտ 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

<<13>> դեկտեմբերի 2019թ.
 Շահումյանի թ/ֆ համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ
համայնքի ավագանու՝ 2019 թվականի
դեկտեմբերի 13-ի N 61 որոշման

ՑՈՒՑԱԿ
Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնքի
սոցոգնություն ստացողների

Հ/հ	Ազգանուն անուն	Անձնագիր	Գումար /հազար դրամ/
1	Պողոսյան Շողիկ	AT0213994	30,0
Ընդամենը			30,0



Աշխատակազմի քարտուղար՝ *Ման* Հ. Մանուկյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Շահումյանի թ/ֆ համայնք
Հեռ.՝ 044 84 08 08, Էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am
Համայնքային կայք՝ shahumyanitf.am

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> դեկտեմբերի 2019 թվականի N 62

**ԱՄԱՆՈՐԻ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *համայնքի ավագանին*

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Շահումյանի թ/ֆ համայնքի 0-12 տարեկան երեխաներին ամանորյա նվերներ տրամադրելու համար համայնքի բյուջեից խտկացնել 400,0 /չորս հարյուր/ հազար դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ «Կողմ»՝ 3 «Դեմ»՝ 0 «Ձեռնպահ»՝ 0

1. Դանիելյան Անդրանիկ

2. Մկրտչյան Սանդրո

3. Յայլոյան Աշոտ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  ԼՅԱՅԼՈՅԱՆ

<<13>> դեկտեմբերի 2019թ.
Շահումյանի թ/ֆ համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Շահումյանի թ/ֆ համայնք
Հեռ.՝ 044 84 08 08, Էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am
Համայնքային կայք՝ shahumyanitf.am

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> դեկտեմբերի 2019 թվականի N 63

**ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի N44 ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *համայնքի ավագանին*

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Շահումյանի թ/ֆ համայնքի ավագանու՝ 2019 թվականի սեպտեմբերի 26-ի <<Շահումյանի թ/ֆ համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին >> N44 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ «Կողմ»՝ 3 «Դեմ»՝ 0 «Ձեռնպահ»՝ 0

1. Դանիելյան Անդրանիկ
2. Մկրտչյան Սանդրո
3. Յայլոյան Աշոտ

(Handwritten signatures of the council members)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Լ. ՅԱՅԼՈՅԱՆ




<<13>> դեկտեմբերի 2019թ.
Շահումյանի թ/ֆ համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ
համայնքի ավագանու՝ 2019 թվականի
դեկտեմբերի 13-ի N 63 որոշման

ՑՈՒՑԱԿ

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ

1. Տնօրենի սեղան -1 հատ
2. Գրասեղան-3 հատ
3. Կախիչ-1 հատ
4. Բազկաթոռ՝ դեկավարի- 1 հատ
5. Համակարգիչ -1 հատ
6. Համակարգիչ / Dual core / - 1 հատ
7. Համակարգիչ / intel pendual nim/ - 1 հատ
8. Համակարգիչ / core i3-6100 / - 1 հատ
9. Նոութբուք / Dell Core i3-2019 / - 1 հատ
10. Պրինտեր / lazer jet 1020/ - 1 հատ ,
11. Մոնիտոր / philips 193vslsl 32/10 / - 1 հատ
12. Մոնիտոր / LG 19 M38 / - 1 հատ
13. Տպիչ համակարգ / Samsung -3200 / - 1 հատ
14. Տպիչ համակարգ / Canan MF 3010 / - 1 հատ
15. Համակարգչի սեղան - 1 հատ
16. Գրասեղան-1 հատ
17. Պահարան-1հատ
18. Էլեկտրական տաքացուցիչ -3 հատ
19. Հետազոտման մահճակալ- 1 հատ
20. Նորածնի կշեռք , հասակաչափ -1 հատ
21. Գրադարան - 5443 կտոր
22. Տաքացուցիչ 2500 Վ- 3 հատ
23. Տաքացուցիչ 3000 Վ- 1 հատ

Աշխատանքակազմի քարտուղար՝  *Մանուկյան* Հ. Մանուկյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Շահումյանի թ/ֆ համայնք
Հեռ.՝ 044 84 08 08, Էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am
Համայնքային կայք՝ shahumyanitf.am

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> դեկտեմբերի 2019 թվականի N 64

ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *համայնքի ավագանին*

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Շահումյանի թ/ֆ համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների նկատմամբ կիրառել խրախուսանք՝ տալ միանվագ դրամական պարգևատրում՝ յուրաքանչյուրին իր մեկ ամսվա աշխատավարձի չափով՝ հաժաձայն հավելվածի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ «Կողմ»՝ 3 «Դեմ»՝ 0 «Ձեռնպահ»՝ 0

1. Դանիելյան Անդրանիկ

2. Մկրտչյան Սանդրո

3. Յայլոյան Աշոտ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ.ՅԱՅԼՈՅԱՆ



Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ
համայնքի ավագանու՝ 2019 թվականի
դեկտեմբերի 13-ի N 64 որոշման

ՑՈՒՑԱԿ
ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ՝ ՄԻՆԿԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ
ՍՏԱՅՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ

Հ/հ	Ազգանուն անուն	Պաշտոն	Գումար
1.	Յայլոյան Լյուդվիկ	համայնքի ղեկավար	250000
2.	Պետրոսյան Էդգար	համայնքի ղեկավարի տեղակալ	170000
3	Մանուկյան Համեստ	աշխատակազմի քարտուղար	155000
4	Ամիրխանյան Ջավահիր	գլխավոր մասնագետ	154000
5	Հովհաննիսյան Օֆելյա	առաջատար մասնագետ	124000
6	Սարգսյան Անի	երկրորդ կարգի , մասնագետ	123000
7	Աբրահամյան Զինաիդա	գործավար	79000
8	Ավետիսյան Լուիզա	գրադարանավար	79000
9	Պողոսյան Գոհարիկ	հավաքարար	78000
10	Յայլոյան Գրիշա	պահակ	79000
	ԸՆԴԱՄԵՆԸ		1291000

Աշխատակազմի քարտուղար՝ *Մանուկյան* Հ. Մանուկյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Շահումյանի թ/ֆ համայնք
 Հեռ.՝ 044 84 08 08, Էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am
 Համայնքային կայք՝ shahumyantf.am

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> դեկտեմբերի 2019 թվականի N 65

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍՈՎ ԼԱԽԱՏԵՄՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *համայնքի ավագանին*

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել Շահումյանի թ/ֆ համայնքի բյուջեի ֆոնդային մասի <<06-1-1>> նախահաշվի <<5113>> հոդվածով նախատեսված մեկ միլիոն դրամից ծախսել 880,0 /ուր հարյուր ութսուն/ հազար դրամ՝ բազմաբնակարան շենքերի մուտքերի երկաթյա դռների պատրաստման և տեղադրման համար :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ «Կողմ»՝ 3 «Դեմ»՝ 0 «Ձեռնպահ»՝ 0

1. Դանիելյան Անդրանիկ
2. Մկրտչյան Մանդրո
3. Յայլոյան Աշոտ

(Handwritten signatures in blue ink)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Լ.ՅԱՅԼՈՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Շահումյանի թ/ֆ համայնք
Հեռ.՝ 044 84 08 08, Էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am
Համայնքային կայք՝ shahumyanitf.am

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> դեկտեմբերի 2019 թվականի N 66

**ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔԸ <<ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ>> ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *համայնքի ավագանին*

ՈՐՈՇՈՒՄ Է՝

- Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի 1-ին փողոցի վերգետնյա զազատարը և ՊԳԿԿ-50 անհատույց տրամադրել <<Բազպրոմ Արմենիա>> փակ բաժնետիրական ընկերությանը:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ «Կողմ»՝ 3 «Դեմ»՝ 0 «Ձեռնպահ»՝ 0

1. Դանիելյան Անդրանիկ

2. Մկրտչյան Սանդրո

3. Յայլոյան Աշոտ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Լ.ՅԱՅԼՈՅԱՆ